ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2023թ. թիվ 820-Ա

Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԵՎ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԻ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156, 163 և 167 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի հուլիսի 28-ի թիվ 359-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Ոսկանյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Ոսկանյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը 2023 թվականի դեկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի հունվարի 8-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր:

2. Ա.Ոսկանյանի 2023 թվականի աշխատանքային տարվա արձակուրդի մնացած մասը՝ 10 աշխատանքային օր, տեղափոխել 2024 թվականի աշխատանքային տարի:

3. Անահիտ Ոսկանյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Ա. Առաքելյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

19/12/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 18
ք.Վանաձոր